ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ—ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԵՑՈՒՂՀՐԱՏ 1935 ԵՐԵՎԱՆ

Տեխ. խմբագիր՝ Հ. Մուրադյան
Թարգմ՝ Լ. Բոլիբեկյան
Սրբագրիչ Գար. Հակոբյան

Գլավլիտի լիազոր № Գ—184, Հրատ № 365, պատվեր № 439, տիրաժ 2000
Հանձնվել է արտադրության 1935 թ. հուլիսի 11-ին
Ստորագրված է տպագրելու 1935 թ. հուլիսի 28 ին

Պոլիգրաֆտրեստի տպարան, Երևան, Նալբանդյան № 11

# ՀՐԱՀԱՆԳ

## ՎՈՉԽԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ոչխարաբուծական ապրանքային ֆերմաներում զուգավորման կամպանիայի կազմակերպումն ու անցկացումը վճռական նշանակություն ունեն ֆերմայի հոտի որակական ու քանակական ցուցանիշների աճման, ապրանքայնության և եկամտի բարձրացման գործում։*

*Ոչխարների զուգավորման կամպանիայի հաջող անցկացումը պահանջում է ժամանակին և կանոնավոր նախապատրաստվել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ֆերմայի բոլոր հնարավորություններն ու պայմանները։*

*Այս հրահանգը պետք է մշակվի ոչխարաբուծական յուրաքանչյուր ֆերմայի բրիգադային և արտադրական խորհրդակցություններում։*

*Զուգավորման կամպանիայի նախապատրաստումը պետք է սկսել ոչ ուշ, քան տվյալ շրջանի համար նախատեսված զուգավորման ժամանակից 1 ու կես ամիս առաջ։ Այդ ժամանակամիջոցում ոչխարաբուծական յուրաքանչյուր ֆերմայում պետք է կատարել հետևյալ աշխատանքները.*

## 1. ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՊԼԱՆԸ

*Յուրաքանչյուր ոչխարաբուծական ֆերմայի ոչխարների զուգավորման պլանը պետք է արտահայտի.*

*ա) մայրերի քանակն ըստ ցեղերի և հոտերի.*

բ) արտադրողների քանակն ըստ ցեղերի և հոտերի, արտադրողների պակասը վորտեղից պիտի ստացվի և ինչ ժամկետում.

գ) արհեստական սերմնավորման յենթակա և ձեռնաքաշ յեղանակով զուգավորվելիք մայրերի քանակը.

դ) մայրերի ընտրությունը համապատասխան արտադրողների համար.

ե) պարտականությունների բաշխումը ինչպես առանձին բրիգադների, նույնպես և բրիգադների ներսում՝ կոլտնտեսականների միջև.

զ) ունեցած կերի քանակը և այն ծախսելու կարգը, նույնպես և արոտների օգտագործումը ինչպես զուգավորման կամպանիայի նախապատրաստման, այնպես և նրա անցկացման ամբողջ ժամանակաշրջանում.

է) ձեռնաքաշ զուգավորման և արհեստական սերմնավորման համար անհրաժեշտ ինվենտարով և շենքերով ապահովված լինելը։

Զուգավորման կամպանիայի անցկացման ժամկետները։

Զուգավորման կամպանիայի պլանը պիտի կազմի ֆերմայի վարիչը՝ հովիվների հետ միասին, վորը պիտի հաստատվի կոլտնտեսականների ընդհանուր ժողովում վոչ ուշ, քան զուգավորումը սկսելուց 1 ու կես ամիս առաջ։

## 2. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Մայրական հոտերն սպասարկող բոլոր կոլտնտեսականները, նախքան զուգավորման անցկացումը, պիտի պատրաստվեն շրջաններում կազմակերպվելիք կարճատև կուրսերում կամ շրջանային ու կոլտնտեսությունների զոովետպերսոնալի անմիջական հրահանգման միջոցով։

Մայրական հոտում աշխատող յուրաքանչյուր կոլտնտեսական հովիվ պիտի հայտնի լինի այս հրահանգը և նա լավ պետք է տիրապետի ձեռնաքաշ զուգավորման տեխնիկային։

Այն կոլտնտեսականները, որ նշանակված են աշխատելու արհեստական սերմնավորման գծով, իրենց ունեցած ընդհանուր գիտելիքներից բացի, պետք պատրաստվեն արհեստական սերմնավորման կայանի հրահանգչի միջոցով։

## 3. ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԺԱՄԿԵՏԸ

*Վոչխարների հղիության շրջանը տևում է **145—155** օր (**5** ամիս)։ ՎԱՖ զուգավորման կամպանիան պետք անցկացնել հաշվի առնելով հետևյալը.*

*ա) Ծինը գցել գարնան այն շրջանը, երբ գառների աճեցման համար ամենանպաստավոր ժամանակն է լինում, հիմնականում վոչխարների արոտային շրջանի դուրս գալու նախօրյակին։*

*Վաղ ծինը, գառների խոշոր սատկումներից խուսափելու համար, թույլատրելի է այն տնտեսություններում, վորոնք լրիվ չափով ապահովված կլինեն հատուկ տաք շենքերով, լավագույն սիլոսով, խոտով և խտացրած կերով.*

*բ) Ծինը պետք անցկացնել **3—4** շաբաթվա ընթացքում, սակայն մասսայական ծինը պետք տեղի ունենա **15—17** օրում։ Ավելի երկարաձգվող ծինը պահանջում է աշխատանքի ավելի գործադրում և, բացի այդ, ստացվում է հասակի մեծ տարբերություն ունեցող սերունդ, վորի հետևանքով ել ուշ ծնված գառները թույլ են զարգանում՝ չդիմանալով ամառային շոգերին։*

*Զուգավորման կամպանիան պետք ավարտել **30—35** օրվա ընթացքում։ Ղոչթողը կատարելիս պետք հաշվել **155** օր այն ժամկետից, երբ ցանկանում ենք վոչխարների ծինը։*

## 4. ԿԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### Արոտների օգտագործման կարգը

*Զուգավորման կամպանիայի նախապատրաստման և նրա անցկացման ամբողջ ժամանակաշրջանում մայրական հոտերին և խոյերին հատկացվում են լավագույն արոտները։ Վոչխարանոցներից կամ վոչխարների գիշերելու վայրից հեռու գտնվող արոտները պիտի օգտագործել զուգավորման կամպանիայի նախապատրաստման ժամանակամիջոցում։ Մոտակա արոտավայրերը, վորոնք հատկացված են ձեռնաքաշ զուգավորման և արհեստական սերմնման համար, պիտի օգտագործել զուգավորման ժամանակամիջոցում։*

### Կերի պահանջը զուգավորման կամպանիայի նախապատրաստման յեվ նրա անցկացման ամբողջ ժամանակամիջոցում

*Նախապատրաստման (1—1 ու կես ամիս) և զուգավորման կամպանիայի ամբողջ ժամանակաշրջանում (1—1 ու կես ամիս) ՎԱՖ պիտի ապահովված լինի խտացրած կերով (գարի կամ վարսակ), հաշվելով մեկ խոյին օրական 0,4 կիլոգրամ, իսկ նիհար և թույլ մայրերին, վորոնք կարիք ունեն լրացուցիչ կերի, օրական 0,2 կիլոգրամի հաշվով։*

## 5. ՄԱՅՐԱԿԱՆ ՀՈՏԵՐԻ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻՆ

### Մայրական հոտերում կոմպլեկտավորում յեվ խոտանում կատարելը

*ա) Բարձր մթերատվություն ունեցող ինչպես զտարյուն, նույնպես և տեղական լավացրած բոլոր մայր վոչխարները, վորոնք գարնանը բոնիտիրովկայի չեն յենթարկվել, աշնանը՝ բեղմնավորումից մեկ ամիս առաջ բոնիտիրովկայի պիտի յենթարկվեն։*

բ) Մայրական հոտերի կոմպլեկտավորումը պետք ե վեր-ջացնել մայրական հոտերը վերակազմելու ժամանակ, վորը կատարվում ե գառներին ծծից կտրելուց և վոչխարների խառնումից անմիջապես հետո։

Խոտանման պետք յենթարկել բոլոր անատամ կամ ատամները շարժվող մայրերին, կրծի խրոնիքական հի-վանդություն ունեցողներին և բոլոր հասակի անբուժելի հիվանդ մայրերին։

Անասնաբուժական-նախազգուշական միջոցառումներ յեվ նրանց անցկացման ժամանակը:

Նախքան մայրական հոտերի վերակազմումը, բոլոր վոչխարներին անասնաբուժական պերսոնալի կողմից ստուգման պետք յենթարկվեն։

1. Բոլոր հիվանդ վոչխարներին զուգավորման պե-տք թողնել միայն հակաքոսային լուծույթներն անցնելուց և վերջնականապես բուժվելուց հետո։

2. Վարակիչ վիժումով հիվանդ մայրերին պետք մեկուսացնել առանձին խմբում և նրանց համար նշանա-կել առանձին խոյեր, վորոնց չպետք ե առողջ հոտերի մեջ թողնել։ Ցեղական բարձրարժեք խոյերին զուգավոր-ման նպատակով չի կարելի թողնել հիվանդ մայրերի հոտի մեջ։ Վարակիչ վիժումով հիվանդ կամ կասկածելի խոյերին արգելվում ե զուգավորման թողնել։

3. Զուգավորման յենթակա վոչխարների հոտերում անասնաբուժական նախազգուշական և մասսայական բուժ-ման բոլոր միջոցառումները, կապված վարակիչ հիվանդու-թյունների բուժման և նախազգուշացման հետ, պետք ավարտել՝ սրսկումները 1 ու կես ամիս, իսկ հակաքոսային

լողացումները և ճիճվային հիվանդությունների բուժումը՝ 1 ամիս, զուգավորումը սկսելուց առաջ։

Մայրական հոտերի կոմպլեկտավորումը պիտի ավարտված լինի մինչև հակաքոսային լողացումները, որից հետո հոտերում վերակազմավորումներ չպիտի կատարել։

Հոտերի վերակազմումը

Ծնտանում կատարելուց հետո ՎԱԾ ծնված բոլոր մայրերը պիտի վերակազմել առանձին հոտերում, պահպանելով հետևյալ կանոնները.

1. Հոտերի վերակազմումը պիտի կատարել բարավոչխարների ցեղերի, դասերի և բոնիտիրովկայի։ Այն հոտերում, որտեղ անց չի կացվում բոնիտիրովկա, մայրական հոտերի խմբավորումները պիտի կատարել ըստ ցեղերի և հասակի, իսկ կոպտաբուրդ ոչխարներինը՝ նաև ըստ բրդի գույնի և գիրության։

Մեռինոս մայրերից հոտեր պիտի վերակազմել ոչ թե ըստ առանձին սերունդների, այլ նրանց գեղմերի դասերի համաձայն։

2. Մայրական հոտի մեծությունը 500 գլխից ավելի չպիտի լինի։

3. Մաղաշներին և թույլ ու նիհար մայրերին պիտի առանձնացնել առանձին հոտերում, հատկացնելով լավագույն արոտներ, միաժամանակ տալով խտացրած լրացուցիչ կեր՝ մեկ գլխին օրական 0,2 կիլոգրամի հաշվով։

4. Այն մայրերը, որոնք ընթացիկ տարում չեն ծնել, պիտի առանձնացնել և առանձին հոտ կազմել, իսկ եթե դրանց թիվը քիչ է, թողնել մայրական ընդհանուր հոտի մեջ, նշանելով ականջախներին և ենթարկելով անասնաբուժական ստուգման։

5. Այն հոտերում, որտեղ գառնանը լեղել է մասսայական վիժում, եթե անգամ ապացուցված չի նրա վարակիչ բնույթ ունենալը, հոտը պիտի վերակազմել այնպես, որ հիշյալ հոտի մայրերը, հոտերը վերակազմելու ժամանակ, չընկնեն առողջ հոտերի մեջ։ Արգելվում է նաև վարակիչ

վիժումով կասկածելիներին խառնել առողջ հոտերին։ Վարակիչ վիժում ունեցած հոտերի համար պետք առանձնացնել խոյեր, վորոնց՝ զուգավորման համար՝ չի կարելի թողնել այլ հոտերի մեջ։

Վարակիչ վիժումով կասկածելի հոտերում պետք սահմանել անասնաբուժական մշտական հսկողություն, նրանց զուգավորման համար առանձնացնելով խոյերի առանձին խումբ։ Նման մայրական հոտերում լավ է անցկացնել արհեստական սերմանում։

Վարակիչ վիժումով հիվանդ հոտերի հովիվներին առողջ հոտեր փոխադրելն անթույլատրելի յե։

### Զուգավորման յենթարկվող մայրերի տարիքը

ա) Վորպես կանոն, զուգավորման պետք թողնել սկսած 1 ու կես տարեկան հասակ ունեցող մաքիներից։

բ) այն վոչխարաբուծական ֆերմաները, վորոնք բեղմնավորման կամպանիայի ժամանակ, մսուրային խնամքի և ծնի ժամանակաշրջանում ապահովված կլինեն տաք վոչխարանոցներով, թույլատրվում է բեղմնավորման թողնել լավ զարգացած և գիրացած 9—10 ամսական եզ գառներին։

Եզ գառների զուգավորման թողնելը յուրաքանչյուր առանձին դեպքում (կոլտնտեսությունում) պետք կատարվի շրջհողբաժնի թույլտվությամբ։

### Զուգավորման նախապատրաստվելը

ՎԱՑ բոլոր մայր վոչխարները զուգավորման ժամանակ պետք ունենան միջակ գիրություն։ Այդ վիճակում վոչխարների ղոչի գալը կանոնավոր է ընթանում, և զուգավորումը վերջանում 3—4 շաբաթվա ընթացքում։ Շատ նիհար կամ շատ ճարպակալած վոչխարները դժվարությամբ են ղոչի գալիս, վորի հետևանքով մեծ քանակությամբ ստերջներ են լինում, և գառների ծինը ձգձգվում է։

*Զուգավորումից վոչ պակաս քան 1 ամիս առաջ վոչխարների կերը պիտի դադարեցնել, վորպեսզի այդ ժամանակամիջոցում մայրերը կազդուրվեն։ Նիհար մայրերի կերը պիտի դադարեցնել 1 ու կես ամիս զուգավորումից առաջ։ Զուգավորման ժամանակաշրջանում վոչխարներին աղ տալը պարտադիր է։*

## 6. ՀՈՏԵՐԸ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐԵԼԸ ԽՈՅԵՐՈՎ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻՆ

**Խոյերի պահանջի հաշվումը**

*ՎԱՖ խոյերի կոմպլեկտավորումը պիտի կատարել համաձայն ընդունված պլանային ցեղի, հետևյալ հաշվով՝*

**Ձեռնական զուգավորման ժամանակ**

*2 և բարձր տարիք ունեցող խոյին . . 45—50 մայր*
*1 ու կես տարեկան խոյին . . . . . 25—30 »*

**Դաշտային զուգավորման ժամանակ**

*2 և բարձր տարիք ունեցող խոյին . . . . 35 մայր*
*1 ու կես տարեկան խոյին . . . . . 20—25*

**Արհեստական սերմնավորման ժամանակ**

*1 խոյին . . . . . . . . . . . . . . 200 մայր*

*Դաշտային զուգավորման պիտի թողնել միայն տեղական կոպտաբուրդ վոչխարներին։*

*Մերինոս և Կարակուլ խոյերին պիտի ոգտագործել ձեռնաքաշ զուգավորման ձևով։*

*Արհեստական սերմնավորման և ձեռնաքաշ զուգավորման ժամանակ պահանջվում են փորձախոյեր, վորոնք ընտրվում են 2—$3^{1}/_{2}$ տարեկան տեղական յերանգուն խոյերից, հաշվելով 1 խոյին 100 մայր։ ՎԱՖ համար պահանջվող խոյերի ընդհանուր քանակից բացի, անհրաժեշտ է խոյերի $10^{0}/_{0}$ չափով ՝լրացուցիչ խոյեր ունենալ՝ փոխարինելու այն խոյերին, վորոնք այս կամ այն պատճառով*

չեն աշխատի, միաժամանակ հաշվի առնելով կոլտնտեսականներին մայրական կաթի խոյերով ապահովելը։

Զուգավորման մասնակցող խոյերի տարիքը

*Խոյերին, ինչպես և մայրերին, վորպես կանոն, զուգավորման պիտի թողնել, սկսած $1^1/_2$ տարեկան հասակից։ Եթե անհրաժեշտ քանակության $2^1/_2$ տարեկանից բարձր խոյեր կան տնտեսության մեջ, այդ ժամանակ $1^1/_2$ տարեկան մատղաշ խոյերի բեռնվածությունը պակասեցվում է, սակայն վոչ մի դեպքում մատղաշ խոյերին չպիտի ազատել զուգավորումից, վորովհետև պիտի ստուգել նրանց սերնդի վորակը, վորպեսզի հաջորդ տարում հնարավոր լինի լավագույն խոյերին հնարավորին չափով ավելի օգտագործել։*

Խոյերի խոտանումն ու սնուցումը

*Վոչխարաբուծական այն ֆերմաները, վորոնք անց են կացնում տեղական վոչխարների մետիզացիա՝ Մերինոս, Կարակուլ և այլ կուլտուրական ցեղի խոյերով, անհրաժեշտ է հինգ գարնանից տեղական կոպտաբուրդ խոյերին անջատել ֆերմայի հոտից։ Վոչ մի դեպքում չթույլատրել մայրերին և տեղական խոյերին մեկ տեղ պահել։*

*Խոյերի խոտանում կատարելիս ավելի պահանջկոտ պետք է լինել, քան մայրերի նկատմամբ։*

*Խոտանման պիտի յենթարկել.*

*ա) այն խոյերին, վորոնք նախորդ զուգավորման կամպանիայի ընթացքում ճանաչված են վորպես իմպոտենտ (սեռականապես թույլ), սերունդ չտվողներ կամ թույլ սերունդ ունեցողներ.*

*բ) սեռական գործարանների դեֆեկտ և գրիժա ունեցողներին, սեռական գործարանների անբուժելի բորբոքում ունեցողներին և անհուսալի հիվանդներին.*

*գ) ֆիզիկապես չզարգացածներին, արտաքին վատ հատկանիշներ և այլ արատ ունեցողներին, հատկություններ, վորոնք անցնում են ժառանգաբար։*

դ) ծերացած, թույլ և անատամ խոյերին։

Խոտանումից հետո, արհեստական սերմանման համար նշանակված բոլոր խոյերի սերմաբջիջները քննության պիտի յենթարկել, իմանալու համար սերմնորդի ակտիվությունը։ Այդ աշխատանքը կատարում է անասնաբույժը կամ արհեստական սերմանում անցկացնող հրահանգիչը։ Այն խոյերին, վորոնց սերմնորդը կճանաչվի անպետք, պիտի յենթարկել խոտանման, յեղջյուրների վրա խաչաձև նշան անելով (խարանել)։

Կոմպլեկտավորում

Ցերման խոյերի պակասը ձեռք է բերում խորհտնտեսություններից կամ այլ կազմակերպություններից։ Գնված բոլոր խոյերը պիտի տեղափոխել ֆերմա վոչ ուշ, քան զուգավորման կամպանիան սկսելուց 2 ամիս առաջ և յեղած խոյերի հետ նախապատրաստել զուգավորման։

Զուգավորման համար խոյերի նախապատրաստումը

Զուգավորման համար խոյերին նախապատրաստելու ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել.

1. ավարտելուն՝ խոյերի, մանավանդ Մերինոս և կիսակոպտաբուրդ խոյերի վերջնական բուժումը քոսից.

2. խոյերին միջակ գիրության հասցնելուն։

Ինչպես խոյերի, նույնպես և մայրական հոտերում բոլոր տեսակի բուժումներն ու նախազգուշական միջոցառումները պիտի ավարտել՝ հակաքոսային լողացումները և ծաղկի դեմ սրսկումները $1^1/_2$ ամիս, իսկ թոքա-ստամոքսային ճիճուների մաքրելը՝ 1 ամիս զուգավորումից առաջ։

Զուգավորման համար խոյերի նախապատրաստման հիմնական աշխատանքն ուղղված պիտի լինի նրանց արոտային խնամքի բարելավման վրա, հանձնելով այդ խնամքը հարվածային, լավագույն հովիվներին։

Զուգավորման կամպանիայի նախապատրաստման ամ-

բողջ ժամանակաշրջանում խոյերին պետք առանձնացնել մայրական հոտերից հեռու գտնվող լավագույն արոտներում, միաժամանակ նրանց կերակրելով խտացրած կերերով։

Խտացրած կերերով լրացուցիչ կերակրելը պետք սկսել՝ խոյերի միջակ գիրության դեպքում՝ 1 ամիս, իսկ նիհար լինելու ժամանակ՝ $1^1/_2$—2 ամիս՝ զուգավորումն սկսելուց առաջ։ Վարսակ կամ գարի պետք է տալ, սկսած 0,2 կիլոգրամից, 8—10 օրվա ընթացքում հասցնելով 0,4—0,6 կիլոգրամի։ Նույն կերաբաժինն էլ շարունակել տալ մինչև զուգավորման կամպանիայի վերջը։

Անհրաժեշտ է խտացրած կերը տալ օրական երկու անգամ հավասար չափով։

Վատ արոտների դեպքում անհրաժեշտ է խոյերին կերակրել նաև լրացուցիչ խոտով։ Ինչպես սակավ կերակրելը, նույնպես և չափազանց ուժեղ կերակրելը, վատ է անդրադառնում խոյերի աշխատունակության վրա, վորովհետև ինչպես նիհարած, նույնպես և շատ ճարպակալած խոյերն անկարող են կանոնավոր աշխատել և ծածկել սահմանված քանակությամբ մայրեր, վորի հետևանքով մայրերի վորոշ մասը մնում է ստերջ և բարձրացնում ստերջության տոկոսը։

## 7. ՇԵՆՔԵՐԻ ՅԵՎ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Մայրական բոլոր հոտերը, զուգավորման որացուցային պլանի համաձայն, ամրացվում են համապատասխան վոչխարանոցների և աղըլների, վորտեղ և պատրաստում են ձեռնաքաշ զուգավորում անցկացնելու բոլոր պարագաները՝ կերամաններ, ջրամաններ, պատգարակներ, լապտերներ, համարակալելու ունելի և անհրաժեշտ քանակությամբ ականջի համարներ։

Վոչխարանոցը կամ աղըլը, վորտեղ անց է կացվում

ձեռնաքաշ զուգավորումը, տախտակներով կտրել մի քանի բաժինների։

Փորձախոյերի համար պետք է պատրաստել լերկուական գոգնոց։

Զուգավորում անցկացվող բոլոր շենքերը պետք է մաքրել և ախտահանել։

Նպատակ ունենալով վոչխարանոցների շրջակայքում լեղած արոտները պահպանել ձմռան և ծնի կամպանիայի համար, անհրաժեշտ է լավ լեղանակներին վոչխարների զուգավորումը անցկացնել ոգտագործվող հեռթական արոտամասում, վորտեղ հարկավոր է անհրաժեշտ հարմարություններ ստեղծել՝ բեղմնավորումը հաջող անցկացնելու համար։

## 8. ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԽՈՅԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Մսուրային խնամքի ժամանակ խոյերը պահվում են փոքրիկ խմբերով՝ 5—10 գլուխ յուրաքանչյուրում, իսկ արոտային խնամքի ժամանակ՝ մեծ խմբերով։ Զուգավորման ժամանակամիջոցին չի կարելի խոյերին մայրական հոտերի շրջակայքում արածեցնել, վորովհետև դրանից խոյերը նիհարում են։ Այդ դեպքերում, վորտեղ անց է կացվում զուգավորումը, խոյերին պետք է պահել այնպիսի ցանկապատած բաժանմունքներում, վորոնց պատերը լինեն բավական բարձր և ամուր, վորպեսզի խոյերը չկարողանան ցատկել, վորից նրանք հաճախ ջարդվածքներ են ստանում։ Զուգավորման ամբողջ ժամանակաշրջանում փորձախոյերի նկատմամբ պետք է սահմանել նույն խնամքը, ինչ վոր խոյերինն է, սակայն փորձախոյերը մյուս խոյերից պետք է առանձին պահել։

Խոյերին՝ զուգավորման կամպանիայի նախապատրաստման և անցկացման ամբողջ ժամանակաշրջանում պետք է արածեցնել լավագույն արոտներում, տալով միաժամա-

նակ նաև լրացուցիչ խտացրած կեր (դարի կամ վարսակ), մեկ գլխին օրական 0,4—0,6 կիլոգրամ։ Զուգավորման վերջին շրջանում, յերբ խոյերի բեռնվածության նորման 1 մայրից չի անցնում, խտացրած կերի քանակը պիտի պակասեցնել 25%։

Յերբ խոյերն այլևս արոտ չեն գնում, անհրաժեշտ է նրանց ամեն օր դուրս բերել մաքուր օդի մեջ՝ ամեն անգամ $1^1/_2$ ժամ տևողությամբ, առանց վորի խոյերը կորցնում են իրենց աշխուժությունը և վատ են աշխատում։ Յերբ խոյերն օգտագործվում են արհեստական սերմանման և ձեռնաքաշ զուգավորման համար, առավոտները, նախ քան զուգավորումը, խոյերին վոչինչ չպետք է կերցնել և չջրել։ Զուգավորումից մեկ ժամ հետո խոյերին նախ պետք է ջրել և ապա տալ խտացրած կերն ու թողնել արոտ։

Արոտ դուրս գալու դեպքում խոյերին պետք է տալ լավորակ խոտ՝ առվույտ, յերեքնուկ և այլն։ Զուգավորման կամպանիան վերջանալուց հետո խտացրած կերի նորման աստիճանաբար պիտի պակասեցնել և 10—12 օրվա ընթացքում հասցնել կերակրման սովորական նորմաներին։

Անհրաժեշտ է յերկար բուրդ ունեցող խոյերի սեռական գործարանների շուրջը յեղած բուրդը ժամանակին խուզել, վորպեսզի զուգավորման ժամանակ չվնասի խոյի և մաքուր սեռական օրգանները։

### Զուգավորման կամպանիան անցկացնելու տեխնիկան

Վոչխարների զուգավորումը կարող է կատարվել բնական ճանապարհով և արհեստական սերմանման միջոցով։

Բնական զուգավորումը լինում է յերեք ձևի։

### 1. Զուգավորման խառը ձև

Այս ձևի ժամանակ խոյերին և մայրերին զուգավորման ամբողջ ժամանակաշրջանում խառնում են իրար, որի ժամանակ զուգավորումը կատարվում է առանց ընտրության, և խոյերը պատահականորեն ու անկանոն կերպով ծածկում են մաքիներին և ուժասպառ լինում, որի հետևանքով մայրերի 15—20%-ն ստերջ է մնում, քանի որ մեկ խոյը կարող է միևնույն մաքուն մի քանի անգամ ծածկել, իսկ մի ուրիշ մաքու չծածկել և ոչ մի անգամ։

Զուգավորման այս ձևի ժամանակ ընտրության մասին, իհարկե, խոսք լինել չի կարող, որը ամենագլխավորն է, մինչդեռ այս ձևի զուգավորման ժամանակ մեր ցանկացած խոյը չի ծածկի այն մաքիներին, որոնց մենք ենք ցանկանում, որ ծածկի, և կծածկի բոլորովին այլ մաքիների, որոնց մենք նպատակ չենք ունեցել ծածկել այդ խոյով։ Այսպիսով ոչ միայն անհնար է դառնում ընտրությունը, այլև անկարող ենք որոշել սերնդի ծագումը։

Զուգավորման այս ձևը գործադրվում է ոչ կուլտուրական տնտեսություններում։ ՎԱՖ-ում այդ յեղանակի գործադրումը անթույլատրելի է։

### 2. Դասային զուգավորում

Զուգավորման այս յեղանակը հնարավորություն է տալիս ընտրության միջոցով ոչխարները որակապես լավացնել։ Այս ձևի զուգավորման դեպքում բոլոր խոյերը և մայրերը բաժանում են 3—4 դասի կամ խմբի, նրանց ունեցած տնտեսական օգտակար հատկանիշների համաձայն։ Որքան այդ հատկանիշները միատարր լինեն, այնքան էլ մեծ է անասունների որակն ավելի կարճ ժամանակամիջոցում լավացնելու յերաշխիքը։

Զուգավորման այս ձևի ժամանակ բոլոր մայրերը նախապես ընտրելով և բաժանելով 3—4 դասի՝ զուգավորման ամբողջ ժամանակաշրջանում խառնում են համապատասխան դասի խոյերի հետ։ Մայրերի յուրաքանչյուր խումբն են թողնվում նրանց համար նշանակված խոյեր, վորի ժամանակ 1-ին դասի խոյերը զուգավորում են 1-ին դասի մայրերին։

Ո ր ի ն ա կ

Վոչխարի հոտը բաժանված է 3 դասի։ 1-ին դասի խոյերին 1-ին դասի մայրերի հետ թողնելուց հետո, յերբ խոյերն ավելանում են, այդ դեպքում 1-ին դասի մնացած խոյերին թողնում են մայրերի 2-րդ դասի հետ և այլն։

Զուգավորման այս յեղանակը մայրական հոտը մանրացնում է մի քանի մասերի և լրացուցիչ բանվորական ձեռքեր է պահանջում։

Այս ձևը կարող է կիրառվել վոչխարաբուծական այն ֆերմաներում, վորոնք իրենց կոպտաբուրդ վոչխարները բուծում են «ինքն իր մեջ», և վորոնք բավականաչափ լավագույն խոյեր ունեն։

Դասային յեղանակի ժամանակ բոլոր խոյերը բաժանվում են 2 մասի և այն ժամանակ, յերբ նրանց մի մասն աշխատում է, մյուս մասը հանգստանում է։

Խոյերի այդ հերթափոխությունը պահպանվում է մինչև զուգավորման վերջը։

3. Զուգավորման ձեռնաքաշ ձևը

Ձեռնաքաշ զուգավորման ձևը պիտի կիրառել.

ա) վոչխարաբուծական տոհմային ֆերմաներում, վորովհետև անհրաժեշտ է իմանալ սերնդի ճիշտ ծագումը։ Համաձայն ԽՍՀՄ ՀԺԿ կոլեգիայի 1933 թ. 19/VI վորոշման, տոհմային ՎԱՖ-ում արգելվում է զուգավորման խառը և դասային ձևերի կիրառումը։

П 24293

Կոպտաբուրդ վոչխարները մերինոսներով և կարակուլներով մետիսացնելու ժամանակ թե խառը ձևի և թե դասային զուգավորման ժամանակ հաճախ առանց մարդու օգնության չեն կարողանում ծածկել մեծադմակ մաքիններին, վորի պատճառով մաքիններն ստերջ են մնում.

գ) բոլոր այն դեպքերում, յերբ անհրաժեշտ է մաքսիմալ չափով օգտագործել բարձրորակ արտադրողներին և հնարավորություն չկա արհեստական սերմանում կիրառել:

Ձեռնաքաշ զուգավորում կատարելու ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները.

ա) զուգավորման ամբողջ ժամանակաշրջանում մայրական հոտերն արածեցնել և խնամել խոյերից առանձին.

բ) Նախքան կերակրելը և արոտ տանելը, ամեն որ վաղ առավոտյան պետք է կատարել դոշի յեկող մայրերի ընտրություն: Դրա համար վոչխարների հոտերը պետք է բաժանել մասերի, յուրաքանչյուր մասը վոչ ավելի քան 250 գլուխ, և այդ մասերից ամեն մեկի մեջ թողնել համապատասխան թվով փորձախոյեր: Փորձախոյերի առաջին վոտքերի հետևից գոգնոց են կապում, այնպես, վոր գոգնոցը կախվի խոյի սեռական անդամի առջևից, վորով խոյը զրկվի մաքուն զուգավորելու հնարավորությունից: Գոգնոցը սովորաբար լինում է չթից 30×40 սմ չափով: Գոգնոցի չորս անկյունից թելեր են ամրացնում և կապում խոյի մեջքին: Յուրաքանչյուր փորձախոյի համար պետք է պատրաստել յերկուական գոգնոց, վորպեսզի հնարավորություն լինի ժամանակին լվանալ և մաքուր պահել.

գ) դոշի յեկող բոլոր մաքիններին պետք է առանձնացնել վոչխարանոցի կամ ադալի հատուկ բաժանմունքում: Անհրաժեշտ է ամեն անգամ փորձախոյերի միջոցով հայտաբերել բոլոր դոշի յեկող մաքիններին՝ թույլ չտալով վոր հոտում նրանք առանց զուգավորման մնան.

*դ) Նախքան զուգավորման թողնելը, ղոչի յեկող բոլոր մաքիներին պետք է յենթարկել ստուգման, պարզելու համար նրանց սեռական գործարանների վիճակը.*

*ե) վոչխարանոցը կամ ագալը, վորտեղ անց է կացվում ձեռնաքաշ զուգավորումը, պետք է բաժանել բաժանմունքների, հետևյալ ձևով.*

| | | |
|---|---|---|
| ա | ե | դ |
| բ | | դ |

*«ա» բաժանմունքը նշանակված է զուգավորման սպասող մայրերի համար, «բ»՝ արդեն զուգավորված մայրերի, «ե»՝ կատարվում է ձեռնաքաշ զուգավորում, «դ»՝ տեղավորում են զուգավորման սպասող խոյերը, «դ» բաժանմունքում տեղավորում են մայրերին՝ զուգավորած խոյերը.*

*զ) Նախքան զուգավորումը, վոչխարաբուծական տոհմային ֆերմաների բոլոր մայրերը և խոյերը պետք է համարակալել ականջի համարներով (ականջի գնտերով)։*

*է) ձեռնաքաշ զուգավորման ժամանակ պետք է հետևել և իմանալ, թե խոյը ցատկելիս իրոք զուգավորեց, թե վոչ։*

*Զուգավորման ակտի մոմենտին յեթե տեղի յե ունենում խոյի բնորոշ ցնցում, նշանակում է զուգավորման ակտն արդեն կատարված է։ Միևնույն որը մաքուն յերկու անգամ զուգավորելն արգելվում է։*

*Բոլոր ղոչի յեկող մայրերին պետք է զուգավորել նույն որը.*

*ը) զուգավորված մայրերի բրդի վրա ներկով նշան անել (ներկը լուծելով նաֆթի մեջ), կամ մեկ փունջ բուրդը խուզել։ 10—12 որ անց, յեթե մաքին կրկին ղոչի*

յե գալիս, պիտի զուգավորել և բուդի վրա յերկրորդ նշանն անել, ըստ վորում այդպիսի մայրերը, չնայած վոր զուգավորված են յեղել, բայց չեն բեղմնավորվել։ Յերկրորդ անգամ ղոնչի յեկող մաքիներին նույնպես պիտի հայտաբերել փորձախույզերով, դրա համար, զուգավորումից 10—12 որ անց, զուգավորված մայրերի հոտի մեջ թողնում են փորձախույզեր և ղոնչի յեկող բոլոր մայրերին զուգավորում են նույն յեղանակով։

Խոյերի սերմնարդի բեղմնավորման կարողությունն ստուգելու համար, անհրաժեշտ է իմանալ, թե մաքին առաջին զուգավորման ժամանակ վոր խոյից է զուգավորված յեղել։ Յեթե պարզվի, վոր խոյերից կան այնպիսիները, վորոնցից յերկրորդ անգամ ղոնչի յեկող մաքիներ շատ կան, անհրաժեշտ է այդ խոյերին խոտանել՝ փոխարինելով պահեստի խոյերով.

թ) զուգավորված մայրերին պահել առանձին խըմբերով։ Զուգավորված մայրերին վոչ մի դեպքում մինչև մյուս որը չխառնել հոտին, վորպեսզի կրկին անգամ զուգավորվածներին փորձախույզերը չընտրեն, այլ անհրաժեշտ է զուգավորվածներին ամբողջ ժամանակամիջոցում պահել առանձին խմբերով։

ժ) $2^1/_2$—6 տարեկան հասակավոր խոյին զուգավորման համար որական կարելի յե տալ 2 մայր վոչխար, վորից մեկն առավոտյան և մյուսը՝ արոտից վերադառնալիս։ $1^1/_2$ տարեկան խոյերին որական տալ 1 մաքի և զուգավորել առավոտյան։

Թույլ խոյերին զուգավորման թողնել 2 որը մեկ անգամ։ Յեթե ղոնչի յեկող մայրերը թվով քիչ են, այդ դեպքում լավագույն խոյերին պիտի աշխատեցնել առաջին հերթին։ Յեթե խոյն առաջին անգամ թույլ չի տալիս ձեռնաքաշ յեղանակով զուգավորում կատարել, այդ դեպքում նրան ու մաքուն պիտի տանել վոչխարանոցի կամ

ազալի բաժանմունքներից մեկը, վորպեսզի ազատորեն ծածկի։ Յերկրորդ որը կրկին թողնում են ձեռնաքաշ, մինչև վոր խոտն ընտելանա ձեռնաքաշ յեղանակին.

ժա) զուգավորման կամպանիայի վերջում, յերբ մայրերի մեծամասնությունը բեղմնավորված կլինի և չնչին թիվ • մայրեր մնացած կլինեն, անհրաժեշտ է հոտի մեջ թողնել, մինչև զուգավորման ժամկետի վերջը, մեկ կամ յերկու լավագույն ու յեռանդուն խոյ, վորպեսզի ազատ ձևով զուգավորեն այն մայրերին, վորոնք չնայած վոր զուգավորված են յեղել, բայց չեն բեղմնավորվել, և այդպիսով նվազագույն չափերի հասցնել ստերջ մնացող մայրերի թիվը։

Ձեռնաքաշ յեղանակի դեպքում, զուգավորման ամբողջ ժամանակաշրջանում, 500 գլուխ մայրական հոտին սպասարկող հովվական բրիգադին պետք տալ լրացուցիչ 1—2 մարդ, վորոնք մյուս հովիվների հետ միասին կխնամեն վոչխարներին և կկատարեն ձեռնաքաշ զուգավորումը։

ժբ) մերինոս խոյերով մետիսացում կատարելու ժամանակ պետք ընտրել այնպիսի մաքիններ, վորոնց բուրդը շոշափելիս նուրբ է, փայլուն, խիտ և յերկար, չունի շատ մեռած մազեր և փորի մասը համեմատաբար ավելի լավ բրդակալած։ Մերինոսներով մետիսացում կատարելու ժամանակ պետք ընտրել սպիտակ և բաց-մոխրագույն մաքիններ, իսկ կարակուլ խոյերի համար՝ սև և կարմիր գույնի մաքիններ։

## 9. ՀԱՇՎԱՌՈՒՄ

Զուգավորման կամպանիայի նորմալ ընթացքի դեպքում, զուգավորման առաջին 15-որյակում պետք զուգավորված լինի ամբողջ մայրերի $75^{0}/_{0}$-ը։ Յեթե այդ ժամանակամիջոցում չի զուգավորվել մայրերի $50^{0}/_{0}$-ը, նշանակում է աշխատանքները շատ թույլ են ընթանում և անհրաժեշտ

և լուրջ միջոցներ ձեռք առնել, վերացնելու այն արգելքները, որոնք խանգարում են զուգավորումը ժամանակին ավարտելը։ Ցուրաքանչյուր հոտում բրիգադիրը պետք է ձեռնարկի զուգավորման հետևյալ հաշվառումները։

| Ամիս և ամսաթիվ | Խոյ № ___ | | Խոյ № ___ | | Խոյ № ___ | | Ընդամենը զուգավորված են մայրեր | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I անգամ զուգավորված մայրերի թիվը | Կրկնակի զուգավորված մայրերի թիվը | I անգամ զուգավորված մայրերի թիվը | Կրկնակի զուգավորված մայրերի թիվը | I անգամ զուգավորված մայրերի թիվը | Կրկնակի զուգավորված մայրերի թիվը | I անգամ | II անգամ | Ընդամենը |
| | | | | | | | | | |

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0002168

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

034.

A 24293

Народный Комиссариат Земледелия ССРА

СЛУЧНАЯ КАМПАНИЯ ОВЕЦ

Армсельхозгиз—1935—Эривань